



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 հոկտեմբերի 2018 թվականի N 1641

«ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՋԵԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ»
ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑ ԼՍՈՒՄՆԵՐ
ԵՎ(ԿԱՄ) ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ավագանու 2016 թվականի հունիսի 07-ի «Համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու և Վանաձոր համայնքի ավագանու 2013 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 75-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 33-Ն որոշմամբ հաստատված կարգը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ, 37-րդ և 84-րդ հոդվածներով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով՝ **որոշում եմ**.

1. «Վանաձոր համայնքի 2019 թվականի տարեկան բյուջեի հաստատման մասին» Վանաձոր համայնքի ավագանու որոշման նախագիծը ներկայացնել հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների 2018 թվականի նոյեմբերի 1-ից մինչև նոյեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածում:
2. Վանաձորի համայնքապետարանի պաշտոնական համացանցային կայքում տեղադրել հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների հրավեր:
3. «Վանաձոր համայնքի 2019 թվականի տարեկան բյուջեի հաստատման մասին» Վանաձոր համայնքի ավագանու որոշման նախագծի հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների վարման համար համայնքի ղեկավարի ներկայացուցիչ նշանակել համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետի պաշտոնակատար Վահե Գրիգորյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

Ճիշդ է՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա.ՕՀԱՆՅԱՆ